ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ 108 ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՊԱՆՅԱԼՆԵՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՈՎ. ՆՐԱՆՑԻՑ 29-Ը ԱՐԴԵՆ ԱԶԱՏՎԵԼ ԵՆ

09.04.2020 20:08

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի քրեական գործերով զբաղվող պաշտպանները, ղեկավարվելով քրեակատարողական հիմնարկներում պահվող պաշտպանյալների առողջության ու անվտանգության պահպանման առաջնահերթությամբ, այս օրերին 100 անձի վերաբերյալ միջնորդություն են ներկայացրել ՀՀ դատախազություն և ընդհանուր իրավասության դատարաններ, և 8 վերաքննիչ բողոք՝ կալանավորումը ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցով փոխարինելու միջնորդությամբ:

Միջնորդությունների և բողոքների հիմքերում հատկապես ընդգծվել է Եվրոպայի խորհրդի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի 20.03.2020 թվականի հանձնարարականի պահանջները:

Այս հանձնարարականի իրականացումը, ի թիվս այլնի, նպատակ ունի կանխարգելել նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի տարածումը ՔԿՀ-ներում:

Կալանավորումն ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ ներկայացված 108 միջնորդությունից և վերաքննիչ բողոքից.

- 29-ը բավարարվել են և կալանավորումը փոխարինվել է ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցով,
- 75-ը դեռևս գտնվում են քննարկման փուլում,
- 4-ը դատարանների կողմից մերժվել են:

Նշենք նաև, որ բավարարված միջնորդություններից մեկը վերաբերել է ցմահ դատապարտվածին՝ վերանայման վարույթի շրջանակում, և արդյունքում կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոց:

Հանրային պաշտպանները շարունակում են միջնորդություններ ու բողոքներ ներկայացնել իրենց մյուս պաշտպանյալների խափանման միջոցները փոփոխելու համար՝ հաշվի առնելով նրանց առողջության և անվտանգության ապահովման

անհրաժեշտությունը:

Առավել մանրամասն՝ ըստ դատավարական փուլերի և առաջադրված մեղադրանքների, կից ներկայացված տեղեկանքում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })